

վրայ խորհրդածելով, փորձ ըրաւ կոշտ մը բժշկելու, որ միւս ամէն տեսակ միջոցներով փորձուած էր և չէր բժշկուած :

Յետ սաքը ըրաւանալու, հիւանդ մասը մաքրեց օճառաւ և չորցուց : Հուծեց ապա փենական թթուուտար՝ շիշը բոցի մը վրայ բռնելով, յետոյ կոշտին կարծր մասը օծեց այս նիւթօվս, առանց դպշերու առողջ մասանց : Քանի մի վայրկեան անցնելէ վերջ, լաւ մը պատեց այն մասն նիւթօվ մը՝ որ կարենայ փենական թթուուտի առաւելագոյն քանակը ծծել, որոյ այրեցականութիւնն առողջ մասանց կրնայ վասա բերել . այս պատճառաւ լաւագոյն է առողջ մասերն առջուց առաջական կոլլոդիոնիւ պատսպարել :

Արդ, բատ ծանրութեան կոշտոյն, ստէպ կրկնելով երեք չորս օրերու մէջ փենական թթուուտի գործածութիւնն, կոշտն բոլորու վին կ'անցնի :

Ժամացոյցի մը դէպք. — Ասկէ շատ տարիներ առաջ ձմեռ ժամանակ, քանի մը անձինք Պլաքուալի մօտ թամիզ գետին եզերքը ձկնորսութիւն ըրած ժամանակին կոնկածուկ մը բռնեցին : Ամենայն դիւրութեամբ որսալով դիենդանին, կոսկածեցան որ կամ հիւանդ է և կամ մեռնելու մօտ : Գիտեզերքը բաշեցին, սպաննեցին բոլորովին, և կտոր կտոր ըներով ստամբուին մէջ գտան զթայիկով արծաթէ ժամացոյց մը, և կարկեհանէ մատանի մը և ուրիշ շատ սոկիէ ժամապաւէնի կտորներ : Այս առարկաներս գուշակեցին որ նաւարեկեալ պաշտօնակալ մի որս եղած պիտի ըլլայ այն կենդանուց, շուտով ստուգուեցաւ կարծրը, վասնդի ժամացոյցին վրայ հետեւալ գրութիւնը տեսան որ էր, « Հանրի Վասթոն, Լոնտոն, թիւ 1369 » : Դիմեցին յիշեալ անուամբ ծանօթ ժամացուցավաճառին, վիտուեց իւր վաճառականութեան տետրակներուն մէջ, և գտաւ որ երկու տարի առաջ ծախիէ է այն ժամացոյցը առ Պ. Թումբարն :

Եթեայ ճանշաւ Պ. Թումբարն այն ժամացոյցը՝ զոր որդւոյն ընծայ տուած էր իւր առաջին ծովու ճամբորդութիւն ընելին առաջ : Այս առաջին ճանշաւինն ստուգուելով, յայտնի իմացան որ երթասարդ պաշտօնակալը զիշեր մը աներեսութացն էր Ֆալմութէ ինը մզն հեռու : Կը կարծուէր որ նաւուն վրայ հսկելու ժամանակ թողուցեր հետացեր էր, մինչդեռ անտարակայս ծովի ինկեր՝ և յիշեալ կենդանուցն զոհ եղեր է : Կենդանին շատ լաւ մարսել էր զմարմինն, բայց մետաղը չէր կրցած մարսել :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գաղղիս : — Այս ամիս բազմաթիւ նշանաւոր քաղաքական դէպքեր տեղի ունեցան, յորս գիխաւորն է Պուլանծէ զօրավարին փախուստը : Գրեթէ ոռվանդակ շաբաթ մը ամէն լրազիթք պատուեցին այս փախուստեան մակրամասն պարագաներն և հետեւութիւնները . այս փախուստն մուցնել տուաւ Գաղղիացւոց միւս այլ ամէն կենսական խնդիրները : Զօրավարին փախստենէն

քիչ առաջ եկեր էր 'ի Փարիզ՝ Գերմանիոյ խորհրդարանին մէջ Ալգաս — Լուէնի նորկայացնող գաղղիացի երեսփոխանն Անթուան . ճշմարիտ հասարակապետականք և եռանգաւ հայրենասէրք՝ սիրոյ և համակրութեան մեծամեծ ցոյցեր ըրին յիշեալ երեսփոխանին . այս միջոցին կարծես բոլորովին մոռցուեր էր նշանաւոր զօրավարն երբ յանկարծ փայլակի արագութեամբ տարածեցաւ իր փախստեան անհաւատալի լուրն : Փախստեան բուն պատճառը եղաւ կառավարութեան գործածած իմիստ և գորտոր ընթաքքը . զօրավարին փախստենէն րիշ օր առաջ կառավարութիւնը բասարաց մտադիր էր ձեր բարակալելու զինքր . թե երևս մատնելու հինգուորական ատենի . զօրավարը ի սկզբան տատանեալ վիճակի մէջ էր , և չէր կրնար որոշել թէ արդեօք պէտք է փախչի թէ մնայ 'ի մայրաքաղաքն . բայց յետոյ ստիպեալ 'ի խորհրդոյ մտերմագունից և զինաւոր կուսակցաց որոշեց փախչիլ . և առանց ձայն հանելու սակաւաթիւ անձանց ընկերակցութեամբ փախսա 'ի Պի. Քսէլ « յերիիրն ազատութեան » : Քիչ վերջը՝ յայտարարութիւնը հրատարակեց՝ յորում կր բողոքէր Գաղղիոյ կառավարութեան իր անձին գէմ գործածած իստութեան և անիրաւութեան վրայ :

Այս միջոցին 'ի Գաղղիա կառավարութիւնը կր փախագէր շուտով գտատասնի հանել զգօրավարը : Գաղղիոյ Երեսփոխանաց ժողովյն ապրիլ կի նիստը շասա աղմկափ եղաւ . Դատական պաշտօնեայն նորընտիր ընդ հանուր դատախատին ամբաստանագիրը ներկայացուց , որով Երեսփոխանաց ժողովէն արտօնութիւն կը խնդրուէր դատին ենթարկելու զհոչականոր զօրավարն Պուլանժէ : յետ բազմութիւ բնդհատման ի կողմանէ Ալակողմանց և Պուլանժէ ահանաց , վերջապէս ամրողի ամբաստանագիրը կարգացուեցաւ , և մեծամասնութեամբ քուէից որոշուեցաւ դատել զՊուլանժէ : Այս ատեն կառավարութիւնը բարձրացուց զծերակոյտն 'ի գերագոյն ատեան գտատաստանական , և ընդհանուր խուզգարկութիւն մ'րրա Պուլանժէի , Ռոյֆորի և Ֆիլոնի բնակութեանց , և կը կարգանք թէ այժմ կառավարութեան ձեռքը գտնուած վանդաւոր թզթոց թիւը կը հասնի ց100,000: Պելիսոյ կառավարութիւնը երբ տեսաւ թէ գործը ծանրակշիռ կերպարանք մը կ'առնու , ստիպուեցաւ որոշել Պուլանժէի տրտաքսումը . երբ զօրավարն իմացաւ կառավարութեան որոշողութիւնը նախ փափագեցաւ անցնիլ 'ի Զլիցցերի , սակայն յետոյ լաւագոյն ևս խորհելով որոշեց գիմել յԱնդզիա :

իտալիոյ բաղաբական կացութեան գլխաւոր դէպքն է դարձաւ իր ափրիկեան գաղթականութիւնն , որ որչափ երկարէ՝ այնքան ևս կ'առաւելուն մտատանջութիւնը և հոգք : Երբ իտալական կառավարութիւնն լսեց Նէկուսի մահը փափագեցաւ իր ափրիկեան խնդրոյն նոր կերպարանք մը տալ զբաւելով զԱմմարո . սակայն այս մտածութիւնն բազմաթիւ հակառակորդը և ընդդիմութիւնը ունեցաւ , ցայժմ կտոռավարութիւնը գեռ ևս բան մը չէ որոշած : Աւոքիշ նշանաւոր գէպք մ'ալ է իտալիոյ թագաւորին մերձաւոր այցելութիւնն առ Կայսրն Գերմանիոյ . հաւանական է որ այս ացցելութիւնն տեղի ունենայ Մայիս ամսայն մէջ . սակայն չեն ուզեր զայրացնել առաւելապէս զԳաղղիա , վասն դիեթէ իտալիոյ թագաւորին իր խոստացեալ այցելութիւնը կատարէ Մայիս ամսայ մէջ սոյն այս ամսայն մէջ տեղի պիտի ունենան նաև 'ի Գաղղիոյ ընդհանուր աշխարհահանդիսին հանդէսները . արդ այս երկու բաղաբական մեծ դիպաց մի և նոյն ժամանակ հանդիպելն անպատճան և գրգռիչ կը համարուի :